ՀՏԴ 316

Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված այլընտրանքային խնամքի ծառայությունների ներդրման գործընթացի պատմասոցիոլոգիական վերլուծություն

Խաղունովա Ամալյա

Հանգուցային բառեր, *խնամքի հաստատություն, երեխայակենտրոն ծառայություններ, օժանդակություն, վերասոցիալականացում, ընտանիք, կանխարգելում, բեռնաթափում*

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի բարեփոխումների հիմքում ընկած է երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը, որը զետեղված է 1989 թվականի նոյեմբերի 20-ի Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 44/25 բանաձևով ընունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (այսուհետ՝ կոնվենցիա) [1]:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են եղել երեխաների իրավունքների պաշտպանության միասնական, կայուն և արդյունավետ համակարգի ստեղծմանը, որը նպաստելու էր կոնվենցիայի դրույթների իրականացմանը, ինչպես նաև երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը՝ ստեղծելով այլընտրանքային խնամքի ծառայություններ [12]:

Հայաստանի Հանրապետության նման մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքներ ունեցող երկրի համար կարևորագույն խնդիր էր շարունակում մնալ նաև խնամքի շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելումը, ինչպես նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների գործունեության բարելավումը: Խնդիրը շարունակում է արդիական համարվել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Հոդվածի պատրաստման համար տեսական-մեթոդաբանական և տեղեկատվական հիմքեր են հանդիսացել հայ և օտարերկրյա քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակագիտական աշխատություններն ու վերլուծությունները, ներպետական և միջազգային իրավական ակտերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված ցուցանիշները: Իրականացրել ենք

որակական սոցիոլոգիական հետազոտություն, մասնավորապես՝ փաստաթղթերի վերլուծություն, խորքային հարցազրույց:

Երեխաների իրավունքներին առնչվող և երկրի ընտանիքամետ քաղաքականությանն ուղղված օրենսդրահիրավական դաշտի պատմասոցիոլոգիական վերլուծություն

Հոդվածի համաշարում նպատակ ենք դրել ներկայացնել երեխաների իրավունքներին և ընտանիքամետ քաղաքականությանն ուղղված այլընտրանքային լուծումներ մեկտեղող կարևոր տարեթվեր և վերջիններից բխող սոցիոլոգիական հետազոտության տվյալներ:

1996 թ. ընդունված ՀՀ «Երեխայի իրավունքների մասին» օրենքը սահմանեց երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ծրագրային հիմունքները [9]: 2000 թ. հաստատվեց «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին որոշումը»: 2002 թ. տարբերակվեցին նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շահերը՝ ՀՀ ԱԺ-ն հաստատեց վերջիններիս սոցիալական պաշտպանության օրենքը [10]:

2003 թ. ՀՀ Կառավարությունը արձանագրեց այն փաստը, որ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաների թիվն աճում է, ընդ որում՝ հաստատությունները համալրվում են հիմնականում սոցիալական որբերով: Սոցիալ-տնտեսական իրավիճակը, այլընտրանքային ծառայությունների ոչ լիարժեք լինելը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ նպաստում էին երևույթի խորացմանը: Արդյունքում ՀՀ կառավարությունը հաստատեց «Երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիրը» հաստատելու մասին որոշումը: Ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում տեղ գտավ «Մանկատների բեռնաթափում» ձևակերպումը: 2003 թ. ՀՀ Կառավարությունը հաստատեց «Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը»: Փաստաթուղթն իր մեջ ներառում էր տարբեր բնագավառներում երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականություն: Հետագայում անհրաժեշտություն առաջացավ մշակել նոր փաստաթուղթ: Նույն թվականին «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և Եվրոպական հանձնաժողովի պարենային ապահովության ծրագրի համաձայն, ՀՀ կառավարությունը հաստատեց «Պետական աջակցություն ՀՀ

մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը: Ծրագրի առջև դրված տարբեր խնդիրների շարքում կար նաև բնակելի տարածքով ապահովման բաղադրիչը: 2006-2009 թթ. բնակարանով ապահովվեց մանկատան 166 շրջանավարտ: 2003 թ. գործարկվեց նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգը: Վերջինս ընդգրկում է նաև «Մանկատուն» և «Որդեգրում» ենթահամակարգերը: «Մանուկ» ՏՀ-ում հաշվառված են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, ընկեցիկ, հանրակրթությունից դուրս մնացած, ոստիկանությունում հաշվառված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (հաշմանդամություն ունեցող անձ), մուրացիկ և թափառաշրջիկ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, ինչպես նաև երեխայի ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, նրանց իրավական կարգավիճակի, ընտանիքի կազմի և այլի վերաբերյալ տեղեկատվությունը:

2005 թ. հիմնադրվեց Երեխաների պաշտպանության ցանցը՝ նպատակ ունենալով նպաստել դժվար վիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և դրանց հասցեականության ապահովմանը, ինչպես նաև առաջարկել պետությանը երեխայի պաշտպանության դաշտի կանոնակարգման նոր մեխանիզմներ՝ այդպիսով նպաստելով համակարգի բարեփոխմանը: 2012 թ. հունվարին ԵՊՑ-ն գրանցվեց՝ որպես «Երեխաների պաշտպանության ցանց» ոչ առևտրային իրավաբանական անձանց միություն: Ցանցի գործունեության թեմատիկ ուղղություններից մեկն էր հանդիսանում այլընտրանքային (ընտանիքակենտրոն) խնամքի տարբերակների զարգացումը ՀՀ-ում: Երեխաների պաշտպանության ցանցի կողմից 2017-2018 թթ. իրականցվել է «Նպաստել Հայաստանում այլընտրանքային խնամքի ընտանիքահեն երեք մոդելներին մատուցվող սոցիալական ծառայութունների զարգացմանը» ծրագիրը, որի նպատակներն էին.

- Ունենալ համապարփակ պատկերացում Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում թիրախային ընտանիքներին (խնամատար, խնամակալ, որդեգիր) մատուցվող սոցիալական ծառայությունների առկայության ու հասանելիության մասին՝ այդ ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ու ընտանիքի պահպանմանը սատար կանգնելու նպատակով,
- Իրականացնել շահերի պաշտպանություն՝ ուղղված թիրախային

ընտանիքներին մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը և ընտանեկան այլընտրանքային խնամքի մոդելների զարգացմանը [12]:

2005 թ. Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Երեխաների խնամքի համակարգի բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում Երևանի Աջափնյակ համայնքում և Գյումրի քաղաքում ստեղծվեց երեխաների սոցիալական հոգածության երկու կենտրոն:

2008 թ. Հայաստանի Հանրապետությունում մեկնարկեց երեխաների խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ձևերից ևս մեկի՝ խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդնումը: Ժողովրդագրական անբարենպաստ զարգացումների համակարգային բնույթով պայմանավորված՝ ՀՀ կառավարությունը ստանձնեց ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի մշակման գործընթացը, որը և հաստատվեց 2009 թ.-ին: Ընդ որում, առաջարկվել էր ծրագիրը հաստատել 2009-2035 թթ. համար: Այսպիսով, ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը հայտարարվեց որպես պետական քաղաքականության գերակայություն, ազգային-պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարր, իսկ ընտանիքը՝ պետական ժողովրդագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ [10]:

2012 թ. կյանքի կոչվեց «ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը»: Ծրագրի արդյունքում մանկատների և այնտեղ խնամվող երեխաների թիվը կտրուկ նվազեց: Այսպես, եթե 2010 թ. Հայաստանում գործում էր 12 մանկատուն, որտեղ խնամվում էր 1240 երեխա, ապա 2015 թ. մանկատների թիվը նվազեց մինչև 8, իսկ երեխաներինը՝ 864: Սակայն, երեխաների գերակշիռ մասը շարունակաբար կազմում էին միայնակ մայրերի և սովորաբար երկու ծնող ունեցող հաշմանդամություն ունեցող երեխաները: Այսպես, եթե կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների թվաքանակի մեջ 2002 թ. միայնակ մայրերի երեխաների թիվը կազմել էր 22,9%, ապա 2015 թ. երեխաների թիվն աճում է մինչև 37.1%, իսկ երկու ծնող ունեցող երեխաների թիվը համապատասխանաբար՝ 54,3%-ից նվազում է մինչև 47%: Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը շարունակաբար չի գերազանցում 2% [10]:

2015 թ. դեկտեմբերին շրջանառության մեջ դրվեց «ՀՀ ընտանիքի պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու

մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ներառում է ընտանիքի պետական միասնական քաղաքականության ռազմավարական երկարաժամկետ նպատակներ, ինչպես նաև կարճաժամկետ խնդիրների համար մարտավարական մոտեցումներ: Սույն փաստաթղթի հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ընտանիքի ընդհանրական և առանձնահատուկ հիմնախնդիրների լուծման գերակայությունները, սահմանված են 2016-2090 թթ. համար:

2016 թ. Հայաստանի Հանրապետությունը որոշում ընդունեց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքը իրականացնել այլընտրանքային խնամքի հաստատությունների ստեղծմամբ: Այլընտրանքային խնամքը ներառում է կենսաբանական ընտանիքից դուրս երեխայի խնամքի կազմակերպման բոլոր հնարավոր տեսակները: Այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

▪ երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու ջանքերի առաջնահերթությունը՝ այլընտրանքային խնամքի տրամադրումը դիտելով որպես տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ, սակայն պարտադրված միջոց, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված) կամ խնամքի գիշերօթիկ հաստատություններում տեղավորվելը՝ որպես ծայրահեղ քայլ և ժամանակավոր լուծում.

▪ երեխայի համար նրա համակողմանի զարգացմանը նպաստող, աջակցող, պաշտպանող և խնամք ապահովող մթնոլորտի և կյանքի պայմանների ապահովում.

▪ տարբեր գործոններով պայմանավորված՝ երեխայի խնամքն իր կենսաբանական ընտանիքում ապահովելու անհնարինության դեպքում, երեխայի խնամքն այլընտրանքային խնամքի ընտանեկան տիպի որևէ տեսակի (որդեգրում, խնամակալություն կամ հոգաբարձություն, խնամատար ընտանիք, ընտանեկան տիպի մանկատուն) միջոցով կազմակերպումը.

▪ այլընտրանքային խնամքի հետագա շարունակման հնարավորության և նախընտրելիության, այլընտրանքային խնամքի որոշման արդյունավետության, ինչպես նաև երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորվելու հնարավորության գնահատում՝ երեխայի այլընտրանքային խնամքի պարբերական մշտադիտարկման հիման վրա.

▪ երեխայի նկատմամբ այլընտրանքային խնամքի տրամադրման վերաբերյալ որոշման ընդունում երեխայի ֆիզիկական ու հոգեբանական

անվտանգության ապահովման հնարավորությունների, երեխայի տարիքի, հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունների, հուզական կապերի, շփման և հաղորդակցության ունակությունների, այլընտրանքային խնամքն ստանձնող ընտանիքի կամ ֆիզիկական անձի բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների, խնամքն ստանձնող անձանց մարդկային որակների, ծնողավարման հմտությունների, երեխայի առանձնահատուկ կարիքների, ինչպես նաև երեխայի պահանջմունքների՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում հնարավոր փոփոխությունների պարտադիր հաշվառման հիման վրա [7].

2017 թ. մեկնարկեց ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ազգայինռազմավարությանումիջոցառումներիծրագիրը: Նշենք նաև, որ 2019 թ. կառավարությունը հաստատել է 2019-2023 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը՝ կարևորելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու այլընտրանքային, համայնքահեն ծառայությունների ցանցի ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Ներկայումս ընթացքի մեջ է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թթ. համալիր ծրագիրը:

«Մանկատների բեռնաթափում» ծրագիրը՝ որպես երեխաներին ուղղված այլընտրանքային ծառայությունների ներդրման սկզբնակետ

Երկրի սոցիալ-տնտեսական պայմանների վաթարացման պատճառով գնալով շատանում էր երեխաների հոսքը մանկատներ, ինչը հակասում է կոնվենցիայի իրականացման դրույթներին: Հայաստանում վտանգ կար սոցիալական որբության նոր ալիքի վերսկսման, ինչը տվյալ ժամանակահատվածում հանդիսանում էր ազգային գերխնդիր: Այդ իսկ պատճառով, որպես խնդրի լուծում օրակարգում հայտնվեց երեխայի՝ ընտանիքում ապրելու գաղափարի որդեգրումը, ինչը մեծ առաջընթաց էր պետական քաղաքականության մեջ [10]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ հաստատված տարեկան ծրագրերի շրջանակներում սկսեց իրականացնել «Մանկատների բեռնաթափում» ծրագիրը, որը պարարտ հող էր հանդիսանալու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված այլընտրանքային խնամքի ծառայությունների ներդրման հաջող մեկնարկի համար:

Ծրագրիրը իրականացվել է երկու փուլով: 2002 թ. իրականացվել է «Մանկատանը խնամվող երեխաների ուսումնասիրություն», որի նպատակն էր հստակեցնել նախարարության ենթակայության մանկատներում խնամվող երեխաների կարգավիճակը: Այդ կապակցությամբ մշակվել են մանկատներում խնամվող երեխաների ուսումնասիրման երկու հարցաշարեր, անցկացվել է ուսումնասիրությունն անցկացնողների վերապատրաստում և իրականացվել է 8 մանկատներում խնամվող շուրջ 875 երեխաների կարգավիճակային ուսումնասիրություն: Նշված հարցաշարերը պարունակել են հարցեր երեխաների կենսաչափական, առողջական տվյալների վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ երեխայի կենսաբանական ընտանիքի մասին: Գնահատվել է նաև սոցիալ-տնտեսական և սոցիալ-կենցաղային իրադրությունը: Մանկատների ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ 1998 թ. համեմատությամբ խնամվող երեխաների թիվը աճել է մոտ 17%-ով՝ հատկապես մասնագիտացված մանկատներում, որը բնակչության խորացող աղքատության, դեղորայքի և բուժծառայությունների բարձր գների, զարգացման խանգարումներ ունեցող երեխաների խնամքի վերաբերյալ ծնողների անբավարար գիտելիքների և հմտությունների պակասի արդյունք էր: Երկրում նաև զարգացման խանգարումներով երեխաներին ուղղված խնամքի ծառայությունների բացակայությունների խնդիր կար:

2003 թ. իրականացվել է ծրագրի երկրորդ փուլը՝ մանկատանը խնամվող երեխաների ընտանիքների ուսումնասիրություն, որի նպատակն էր պարզել այդ ընտանիքների կարգավիճակները, երեխաներին մանկատուն հանձնելու դրդապատճառները և այն ընտանիքների ընտրությունը, որոնց հնարավոր կլինի վերադարձնել երեխաներին՝ պետության կողմից համապատասխան աջակցություն ցուցաբերելու միջոցով: Այդ կապակցությամբ մշակվել էր մանկատներում խնամվող երեխաների ընտանիքների ուսումնասիրման հարցաշար, անցկացվել է ուսումնասիրությունն անցկացնողների վերապատրաստում, և գնահատման համար ընտրվել են մանկատներում խնամվող երեխաների 187 ընտանիքներ: Ընտանիքների գնահատման համար հիմնական չափանիշներ են ընտրվել ընտանիքի սոցիալ-տնտեսական, բնակարանային և կենցաղային պայմանները, ընտանիքի անդամների առողջական վիճակը, նրանց զբաղվածության խնդիրները, ինչպես նաև ընտանիքի բարոյահոգեբանական իրավիճակը:

Ոչ բարենպաստ ճանաչված ընտանիքների հիմնական կարիքներն են հանդիսացել՝ բնակարանի (50%), աշխատանքի (40%), սոցիալ-կենցա-

դային տարրական պայմանների բացակայությունը (70%) և առողջական վատ վիճակը (25%): Ոչ բարենպաստ են ճանաչվել նաև այն ընտանիքները, որտեղ ամուսիններից մեկը լքել է ընտանիքը (15%), ընտանիքում առկա է տնական կոնֆլիկտային իրավիճակ (4%), ընտանիքի հայրը հարբեցող (թմրամոլ) է (2%) և այլն [10]:

Բեռնաթափման ծրագիրը 2006 թ. իրականացելէ ՀՀ Լոռու մարզում, իսկ 2014 թվականից՝ նաև ՀՀ Շիրակի մարզում: Ծրագրի հիմնական նպատակն էր հանդիսանում մանկատանը խնամվող երեխաների վերադարձը կենսաբանական ընտանիքներ՝ ստեղծելով նրանց լիարժեք կյանքի կայուն երաշխիքներ:

Ծրագրի հաջող ընթացքի և արդյունավետության ապահովման համար իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- մանկատներում խնամվող երեխաների վերադարձը իրենց կենսաբանական ընտանիք,
- ընտանիքների և երեխաների ուսումնասիրություն և ընտրություն,
- հոգեբանական աշխատանք ընտանիքների և երեխաների հետ,
- ընտանիքների հետ պայմանագրերի կնքում,
- ընտանիքներում երեխաների հետագա կյանքի վերահսկողություն,
- կենսաբանական ընտանիքներին աջակցության տրամադրում,
- աջակցություն ընտանիքներին աշխատանքի տեղավորման հարցում,
- ֆինանսական աջակցություն ընտանիքներին,
- ընդգրկում աղքատության ընտանեկան նպաստի համակարգում,
- սոցիալ-հոգեբանական աշխատանք ընտանիքների հետ:

Ծրագրի իրականացումը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակվել էր «Առավոտ» ԲՀԿ-ին: Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով իրականցրել ենք խորքային հարցազրույց Արուսյակ Գրիգորյանի հետ, ով 2014-2019 թթ. համակարգել է «Առավոտ» ԲՀԿ-ի Գյումրու գրասենյակի աշխատանքները Հայաստանի Հանրապետության խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագրի շրջանակում: Ըստ տիկին Գրիգորյանի հայտնած տեղեկատվության՝ ծրագրի շահառուներ են հանդիսացել՝

- Շիրակի մարզի երեխաների խնամք և պաշտպանություն իրակա-

նացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաները և նրանց ընտանիքները,

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի երեխաները, որոնց ծնողները (կամ միակ ծնողը / օրինական ներկայացուցիչը) դիմել են երեխային հաստատություն տեղավորելու համար,
- այն երեխաները, ովքեր հաստատությունից վերադարձել են ընտանիք և անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի արդյունքների համաձայն կարիք ունեն ստանալու սոցիալ-հոգեբանական վերականգնման և մանկավարժական ծառայություններ, որոնց մատուցման տևողությունը մինչև 12 ամիս է:

Տիկին Գրիգորյանը նշեց նաև, որ ծրագրի շրջանակում այցելել են Շիրակի մարզում այն ժամանակ գործունեություն ծավալող թվով 7 խնամքի հաստատություն, մասնավորապես՝ «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ, «Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, «Գյումրու N 1 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, «Տիրամայր Հայաստանի կուսաստան կենտրոն», «Թռչունյան տուն երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՍՊԸ, «Գյումրու N 3 մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ օժանդակ դպրոց» ՊՈԱԿ, «Արթիկի N 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ: Տիկին Գրիգորյանը նաև նշեց, որ հաստատություններում խնամվող երեխաների վերադարձը կենսաբանական ընտանիք ապահովելու նպատակով կառույցի կողմից իրականցվել է՝ հաստատություններում գտնվող երեխաների տվյալների ուսումնասիրություն, վերլուծություն և նրանց կարիքների գնահատում, տունայցի կազմակերպում, սոցիալ-կենցաղային պայմանների գնահատում, անհատական սոցիալական ծրագրի մշակում և իրականացում: Երեխաների մուտքը հաստատություն կանխարգելման նպատակով կառույցի կողմից իրականցվել է՝ընտանիքների ընտրություն, անհատական սոցիալական ծրագրի մշակում և իրականացում, ծրագրի շրջանակներում նախատեսված բնաիրային օգնության փաթեթի տրամադրում, ինչպես նաև կառույցի կողմից փոխհատուցվել է էլեկտրաէներգիայի ծախսը: Տիկին Գրիգորյանը իր խոսքում նշեց նաև, որ բնաիրային աջակցություն տրամադվել է «Դիակոնիա» բ/կ-ի կողմից ևս: Ըստ Տիկին Գրիգորյանի տրամադրած թվային ցուցանիշների՝ 2014-2018 թթ. ընթացքում Շիրակի մարզի հաստատություններից կենսաբանական ընտանիք է վերադարձել 90 երեխա, և կանխարգելվել է թվով 140 երեխայի մուտքը հաստատություններ:

Կառույցը իր գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև թափանցելիության ապահովման նպատակով մշտապես համագործակցել է երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող մասնագետների, պետական և մասնավոր կառույցների հետ: Գործընկերների շարքում են եղել ուսումնական հաստատություններ, Խնամակալության և հոգաբարձության մարմինը, Շիրակի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինի աշխատակազմը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան ներկայացուցիչները և այլն:

2019 թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ը «Առավոտ» կազմակերպության հետ համատեղ իրականացրել է «Շիրակի մարզի հատուկ հաստատություններում գտնվող երեխաների կարիքների խորքային գնահատում, փոխակերպման պլանի մշակում և ռեսուրսների մոբիլիզացում» ծրագիրը, որի նպատակն էր.

1. Շիրակի մարզի Գյումրու Ֆր.Նանսենի թիվ 2 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության, Գյումրու թիվ 3 մտավոր թերզարգացում ունեցող հատուկ (օժանդակ) դպրոց, Արթիկի թիվ 1 մտավոր թերզարգացում ունեցող հատուկ (օժանդակ) դպրոց հաստատություններում գտնվող 257 երեխաների կարիքների խորքային գնահատում:
2. Փոխակերպման պլան և ռեսուրսների մոբիլիզացում:

Տիկին Գրիգորյանը հավելեց նաև, որ անկախ քննադատություններից ծրագիրը հաջողությամբ պարարտ հող հանդիսացավ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին այլընտրանքային խնամքի ծառայությունների ներդրման գործընթացում:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված աշխատանքի վերլուծությունից եզրակացնում ենք, որ

- ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին այլընտրանքային խնամքի ծառայությունների ներդրումը ժամանակի հրամայական էր, ուստի երկրում պետք է հավասարաչափ կայացնել և ամրապնդել այլընտրանքային խնամքի ինստիտուտը՝ հիմք ընդունելով երեխայի իրավունքները և լավագույն շահը:
- Տարբեր մակարդակներում երեխաներին և ընտանիքներին սոցիալական ծառայությունների հասանելությունը հիմնական տարր է երեխաների և նրանց ծնողների բազմազան կարիքները հոգալու համար՝

նրանց կյանքի տարբեր փուլերում և իրավիճակներում, ուստի այլընտրանքային ծառայությունների իրականացման հիմքում պետք է լինի որակյալ և մատչելի ծառայությունների տրամադրման հրամայականը։

➢ Գործընթացը վերահսկվում է արտաքին և ներպետական շահակից կառույցների կողմից, սակայն ՀՀ-ում դեռևս կայացած չէ մասնագիտացված հաստատությունների երեխաների համար այլընտրանքային խնամքի իրականացման մշակույթը։

➢ ՀՀ-ում տվյալ պահին գործունեություն են ծավալում երեխաներին խնամքի ծառայությունն տրամադրող թվով 11 կառույցներ՝«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ, «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ, «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Երևանի աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ, Երևանի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, ինչը մտահոգիչ ցուցանիշ է։

Ելնելով մեր կողմից արված հետազոտությունների բովանդակությունից և թեմայի կարևորությունից՝ անում ենք հետևյալ առաջարկությունները.

➢ խթանել համայնքային խմբային տների գործունեությունը՝ որպես մասնագիտացված խնամքի հասատատությունների երեխաների և շրջանավարտների այլընտրանքային խնամքի միջոց։ Գործընթացը պետք է ուղեկցվի օրենքի կարգավորմամբ՝ մշտապես իրականացնելով բարեփոխումներ ի նպաստ երեխաների իրավունքների անխոչընդոտ իրացմանը,

➢ միջպետական և ներպետական մակարդակում ապահովել այլընտրանքային ծառայությունների ինստիտուտի կայացման գործընթացը՝ մշտապես իրականացնելով իրազեկիչ աշխատանքներ ազգաբանակաչության շրջանում,

➢ զարկ տալ երեխաների անկախ ապրելակերպին միտված նոր սոցիալական ծառայությունների մատուցմանը՝ ներկայումս գործող հաստատություններում ապահովելով մշտական վերահսկողություն՝ ուղղված աշխատակիցների շրջանում երեխայակենտրոն և մշակութազգայուն մոտեցման ամրապնդմանը։

Նորմատիվ իրավական ակտերի ցանկ

1. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ՄԱԿ, 20 նոյեմբերի 1989 թ.:
2. ՀՀ Կառավարության որոշում (2014 թ. հուլիսի 17). No. 743-Ն ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին:
3. ՀՀ Կառավարության որոշում (2016 թ. մայիսի 26). No. 551-N կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի No. 1112-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
4. ՀՀ Կառավարության արձանագրային որոշում No. 18-1 (2016 թ. մայիսի 12). «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման» հայեցակարգին հավանություն տալու մասին:
5. ՀՀ Կառավարության արձանագրային որոշում թիվ 36. (2016 թ. սեպտեմբերի 15). «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրին» հավանություն տալու մասին:
6. ՀՀ Կառավարության արձանագրային որոշում (2017 թ. հուլիսի 13), https://www.egov.am/protocols/item/
7. ՀՀ Օրենք (1996). No. 59:
8. ՀՀ Վիճակագրական կոմիտե (2016 թ). Հայաստանի պատկերը և աղքատությունը:
9. Դեպի այլընտրանքային խնամքի ծառայություններ Հայաստանում՝ խնամքի հաստատությունների ծախսերը և համայնքային ծառայությունները, UNICEF (2010թ.):
10. ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի մասին 2009 թ. նոյեմբերի 20-ի ուղեցույց:

Историко-социологический анализ процесса внедрения альтернативных услуг по уходу за детьми, находящимися в трудных жизненных условиях, в Республике Армения

Хадунова Амалия

Резюме

Ключевые слова: *учреждение опеки, услуги, ориентированные на ребенка, поддержка, ресоциализация, семья, профилактика, разгрузка*

Реформы в области защиты детей в Республике Армения основаны на праве ребенка жить и воспитываться в семье. Реформы, осуществленные в сфере защиты детей, находящихся в трудной жизненной ситуации в Республике Армения, были реализованы в последние годы. Эти реформы были направлены на создание единой, стабильной и эффективной системы защиты прав детей, находящихся в трудной жизненной ситуации. Целью данной статьи является представление данных социологического опроса, посвященного политике Республики в отношении прав детей,находящихся в трудной жизненной ситуации. Задачи данной статьи – показать роль и важность альтернативных социальных услуг в жизни детей, находящихся в трудной жизненной ситуации. Более подробная статистика, связанная с процессом, будет представлена в диссертации.

Historical and Sociological Analysis of the Process of Introducing Alternative Services for the Care of Children in Difficult Living Conditions in the Republic of Armenia

Khadunova Amalya

Summary

Key words: *guardianship institution, child-oriented services, support, resocialization, family, prevention, unloading*

Reforms in the field of child protection in the Republic of Armenia are based on the right of the child to live and be brought up in a family. The reforms implemented in the field of child protection have been implemented in the Republic of Armenia in recent years. These reforms were aimed at creating a unified, stable and effective system for the protection of children's rights. The purpose of this article is to present the data of a sociological survey on the policy of the Republic in relation to the rights of children. The main purpose of this article is to show the importance of alternative service in the lives of children in difficult situations. More detailed statistics related to the process are presented in the dissertation.

Ներկայացվել է 15.04.2022 թ.
Գրախոսվել է 13.05.2022 թ.
Ընդունվել է տպագրության 27.05.2022 թ.